

Թե՛նէ՛ անհունապէս հեռաւոր ենթագրութիւններ եւ պարզապէս աստղաբանական հաւանականութիւններ են եւ ոչ այլ ինչ, եւ զորս մեր գիտմամբ բերինք յառաջ, ցոյց տալու համար թէ՛ գիտութիւնն եւս, իւր ամենագրական լրջութեամբն հանգերձ, երբեմն ինչպիսի հաճոյանքներ կ'ստեղծէ իրեն համար, սոսկապէս ենթագրական հաւանականութիւններն իրրեւ հնարաւոր պատահականութիւնք՝ ի հաշիւ եւ ի նկատի առնելով:

Եւ անշուշտ այդ տեսակ աստղաբաշխական ենթագրութիւններէ ծնունդ առած լինելու է նաեւ ժողովրդեան մէջ, ամեն մի գիտաւորի երեւման պահուն մօտ, Երկրիւ ընդհարման եւ կործանմանը մասին մերթ ընդ մերթ յառաջ եկած զրոյցներն ու կարծիքներն, որք միամիտներուն բաւական երկիւզ կ'պատճառեն, չրգիտնալով թէ՛ աստղաբանական հաւանականութեանց եւ ստուգապէս մօտալուտ պատահականութեանց միջեւը՝ ինչ անհուն տարբերութիւն կայ:

Իրաւորաց վերայօք այսքան ինչ համառօտակի անցնելէ յետոյ, գանք այժմ՝ ինեյտոնի եւ Հալլէյի աշխատութիւններէն սկսեալ՝ տեսնել գոցա նկատմամբ եղած զննութիւններն եւ եղած գիտնական նորանոր գիւտերն:

(ՆՐԸՆԴԷԼԷ՛),

ՆԻԿ. Մ. ԹԻԻԼՊԷՆՏՃԵԱՆՑ.

Վրիպակ.—Արտաստայ Է. Թուղյն՝ ներկայ յօդուածոյս երկրորդ մասին մէջ. 187 էջին ներքեւը մի թօնոյի կամ 1000 քիլօկրամի հաւասարակշիւ ծանրութեան չափ՝ սխալմամբ 245 փուտ նշանակուել է. փոխանակ 75 փուտի:

Մ. Հ.

ՄԱՐԴՈՒ ԱՌԸՆՁԱԿԱՆ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԸ,

ՈՐՈՆՔ ԿԱՊ ՈՒՆԵՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵՆԱՅ ՀԵՏ:

«Մարդս հասարակական արարած է, ասումէ Արիստոտել փիլիսոփան: Հասարակութիւնը մարդուս համար այնքան հարկաւոր է, որքան մեղուի համար փեթակը եւ միջիւնին մըրջիւնաբոյնը:

Մարդս միայն իւր նմանների մէջ կարօզ է կտաւրելագործուիլ, ցոյց տալ իւր գործունէութիւնը եւ բաւականութիւն տալ իւր պահանջմունքներին: Եթէ մարդս հասարակական եւ ընկե-

բախան շրջանից հեռու է մեծանում: Նա իւր զարգացմամբ ստոր է կենդանիներից:

Ամեն մի անհատը մարդկային շրջանի կամ հասարակութեան մէջ ոչ միայն զարգանում, կատարելագործվում է, այլ եւ իրան զգում է ամենից բարձր: Արդէն զի կապուի հասարակութեան հետ՝ հարկաւոր են մարդու մի քանի յայտնի զգացմունքներ ունենալ: Այդ զգացմունքներից մի քանիսը ցանկութիւններ են ծնեցնում մարդկային անհատների մէջ, որպէս զի աւելի մօտենայ հասարակութեանը. իսկ միւսները — այնպիսի գործողութեանց ժամանակ — որոնք համարվում են ամօթալի եւ մեղսալի:

Ա.) Յիշենք այդ զգացմունքներից միայն երեւելի, որոնք նպաստում են անհատների միմեանց մօտեցնելուն, որք են՝ Բարեպաշտականութիւնը, Կապակցականութիւնը եւ համագործակցութիւնը:

ա.) Բարեպաշտականութիւնը եւ ընկերութիւնական զգացմունքը երեւալոյց մէջ աւելի շուտ է ծնւում, հենց այն բոլորին, երբ նա սկսում է մասնակցել իւր հասակակիցների խաղերի մէջ, նայելով թէ ինչպէս են վերաբերւում զէպի ինքն — թշնամութեամբ թէ բարեկամաբար: Նայելով թէ ինչպիսի զգացմունքներով կրթութեամբ մանկանց շրջանի մէջ է դաստիարակւում, նա ստանում է նոյնը, եթէ ոչ բոլորը, գոնէ մի մասը: Արդհետեւ զգացմունքը ունի մեծ կրթական ազդեցութիւն, ուրեմն պիտի աշխատել համազգացմունք ունեցող շրջանների մէջ կրթել մանկանը: Ամեն մի կրթութեամբ մանուկ, հաւրվում է ոչ թէ միայնակեցութեանը, այլ հասարակական կեանքին. հետեւապէս չպիտի քանդել նորա մէջ բարեպաշտական եւ ընկերութիւնական զգացմունքները, որովհետեւ դժբա ծառայում են իրեւ միջոց անձնամօլութեան զգացմունքները սննդացնելու:

Բ.) Միայն այն ժամանակ է նկատւում մանկան մէջ դաստիարակութեամբ, երբ նորան փայփայում են, իսկ անդամային՝ երբ սաստում են:

Երբ մեզ գուրգուրում եւ փայփայում են, մենք էլ իսկոյն ցոյց ենք տալիս հրճուանք, եւ ուղղւում ենք փոխազարձը հաւուցանել: Փայփայման ցանկութիւնը ոչ թէ միայն մարդու մէջ կարող է զարթնել, այլ եւ կենդանեաց — մանաւանդ ընտանի կենդանեաց մէջ: Կենդանին իւր տիրոջը աւելի այն ժամանակ է ցոյց տալիս

սէրը, երբ տէրը փայտայումէ, — իսկ հակառակը — երբ բարկացնում:

Թէ ինչ տեսակ մանկանց մէջ աւելի զօրաւոր է փայտայման պահանջը՝ դա աւելի նկատելի է լինում ոչնտեղ, որտեղ սանիկները զուրկ են ծնողներից եւ հեռու բարեկամներից, չստանալով ոչ ոքից փայտայումն՝ ամբողջապէս հոգսով եւ մարմնով սիրումեն նոցա, որոնք նոցա կարեկից են:

Դաստիարակիչը կանոնաւոր փայտայանքից կարող է մեծ օգուտ քաղել, որովհետեւ նորանով նա կարող է մանկանն իւր հետ կապել՝ մասնակից լինելով նորա թէ՛ աշխատանաց թէ՛ արամութեան եւ ուրախութեան, եւ թէ՛ այն բոլորի մէջ, ինչ որ մանկան անհանգիստ է անում:

Ք.) Շատ հեշտ է նկատել որ, երբ մանուկը տեսնումէ իւր առաջ տխուր գէմք կամ արտասուելից աչքեր, նա էլ խիղջն յոխտումէ կամ թէ չէ՝ սկսումէ լալ: Ընդհակառակը՝ երբ տեսնումէ ուրախ եւ ժպտող գէմք, նա էլ խիղջն ուրախանում կամ ծիծաղում է: Հետեւապէս ուրիշների դրութիւնը մանկական օրում արձագանք է գտնում: Այդպիսի արձագանքը կանոնաւոր կրթութեամբ տեսնումէ մեզ գէտի օտարի զգայաւցութիւնը:

Եթէ մենք մեր բարեկամաց ցաւերին եւ դժբաղդութեանը մատնակից ենք, ասումեն նորան կաշեկից լինել:

Կարեկցական զօրութիւնը զանազան տեսակ են լինում: ա) ինչ որ գէմքի կենդանի պատկերը մեզ ցոյց է տալիս, նոյնը խիղջն դարձնումէ եւ մեր մէջ: Մանաւանդ այն ժամանակ աւելի զգացած կլինենք, եթէ նոյնը մենք ինքներս փորձած լինենք: Բ) Եթէ կարեկից անձը շատ մօտիկ է մեզ, օրինակ, եթէ ծնօղ է կամ ծանօթ, աւելի մասնակից ենք նորա հեծութեանը՝ քան թէ օտարին: Գ) Հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ այն անձինք, որոնք աւելի զօրեղ են իրանց հոգւոյ զգայողութեամբ, նոցա վերայ աւելի մեծ ազդեցութիւն է անում ուրիշի կարեկցութիւնը եւ Դ) կախում է չարակամութեան զգայողութիւնն ունենալուց կամ չունենալուց, օր. Բարկութիւնից, Կարեկցութիւնից եւ այլն:

Շատ հասկանալի է, որ կարեկցութիւնն ունենալը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ նա է աղբիւր մարդասիրական զգացմանց: Մենք գիտենք՝ որ դժբաղդ, հիւանդ եւ քաղցած մարդիկ

ամեն տեղ շատ կան, բայց չեն թուլնում նոցա ճակատագրի կամքին, այլ կարեկից հասարակութիւնը մասնակցում: Նոցա գրութեանը եւ ամեն տեսակ օժանդակութիւններ է ցոյց տալիս:

Ընդհանրութեան ուրախութեան համազգացումն մեզ էլ պատճառումէ նոյնը: Նաւ բնական է, որ մի ընտանիքի ուրախութեան կամ տրամոլթեանը մասնակցում են իրան շրջապատող անձինքը եւ շատ անգամն էլ տէրութիւնն. յայտնի է օրհին ժամանակներում Յոյները ուրախանում եւ պարծենում էին Ալիմպիական խաղերի ժամանակ, եթէ սր իրանց հայրենակիցներից մէկը իւր յաղթութեամբ հաշակվումէր: Աս արդէն հայրենասիրական համազգացման տեսակէտիցն է:

Բ.) «Յիշենք այստեղ այն երէ՛, տեսակ գործողութեանց մասին, որոնք համարվում են հետեւանք ամօթալի եւ պօքալի գործոց, որք են՝ — աճելաժողովիւն, դղումն եւ խճահարումն»:

Ամեն մի հասարակութիւն ունի անշուշտ իւր հաստատած բարոյականացնող օրէնքները: Ամեն մի անհատն էլ ենթարկվումէ նոյն օրէնքներին, եւ ծանօթանալով նոցա ինչ լինելուն հետ՝ վերջապէս սեփհականացնումէ իրան այն օրէնքները: Եթէ անհատի գործունէութիւնը համաձայն է օրինաց պահանջման հետ, այն ժամանակ նորա մէջ ծնվումէ ցանկութեան բաւականութիւն կամ խղճի հանդարտութիւն. ընդհակառակը՝ եթէ նա քանդումէ մի որ եւ է օրէնսգրութեան կէտ կամ մի որ եւ է բարոյականացնող սկզբունք, իսկոյն նորա մէջ ծնվումէ ամօթալի հարսութիւն կամ զղման զգացումն:

Ամօթխածութեան զգացմունքը ծնվումէ մեր մէջ այն ժամանակ, երբ մենք կատարում ենք այնպիսի գործողութիւն, որ ամօթալի է:

Նաւ անգամ՝ ամօթխածութեան զգացմունքը դարձնումէ մեր մէջ այնպիսի գործողութիւններից, որոնք բարոյական տեսակեալից անորոշ են: — ոչ բարոյական է եւ ոչ անբարոյական: Այսպէս օրինակի համար, եթէ պարահանդիսական սրահում հանգիտականաց ներկայութեամբ պատահմամբ մի երիտասարդի ոտը սլքեց պար գալիս եւ վայր ընկաւ, նա զգումէ վերին աստիճանի ամօթ: Եթէ լաւ նայենք բարոյական տեսակեալից, այդ յանկարծակի վայր ընկմանը՝ չի կարելի հարմարել անբարոյական

արտրմունք, այն ինչ նա ծնեցնումէ երխոասարդի մէջ ամօթահարութեան զգացմունքը:

Կրթութեան ժամանակ մենք կարողենք օգուտ քաղել ամօթխածութեան զգացմունքից, այսինքն դորան կարողենք գործածել իբրեւ սլափեղութիւն միջոց, բայց այդ ժամանակը հարկաւոր է վարուիլ ըստ մանկավարժական օրինաց: Ամօթահարութիւնը շատ փափուկ զգացողութիւն է, եւ շատ շուտ կոշտանում ու բխանումէ: Եթէ օրինաւոր կերպով չենք վարւում մանկան հետ: Այդ զգացմունքը բխանումէ եւ այն ժամանակ, երբ ամաչեցնելու ձեւը շատ խիստ է, սանիկը այն ժամանակ խօկոյն զգումէ, որ շատ անօրէն վարուեցան իրա հետ: Այդ ժամանակ ամօթխածութեան զգացմունքը յաղթվումէ եւ տեղի է տալիս մանկան բարիութեան եւ ինքնատիրութեան զգացողութեանը:

Ամօթխածութեան զգացմունքը ունի իւր առանձին երեւոյթները, գլխաւորապէս նա երեւումէ աչքերում: Մենք կրտսեմենք, որ ամաչող անձը կարծես թէ ուզումէ իւր աչքերը թաքցնել ուրիշից, նա չի կարող ուղիղ նայել այն անձին, որից ամանւումէ: Բացի դորանից ամօթահարութեան զգացումն երեւումէ եւ կերպարանքի այլայլութեան մէջ — ամաչողը կարմրումէ:

Բ.) Խղճահարութեան զգացումն ծնվումէ մեր մէջ այն ժամանակ, երբ մենք զգումենք, որ չլրարուեցանք բարոյական օրինաց հիմանց համաձայն: Իբրեւ գլխաւոր վարթեցնող այս զգացման ծառայումէ մեզ անհամաձայնութեան խոստովանութիւնը, որ տեղից ուրիշներին յայանդումէ մեր գործած յանցանաց օրակսութիւնը, այն բոլէին մենք համարումենք, որ մեր մասին լաւ գաղափար չունին: Շատ անգամ էլ խղճահարութեան գործողութիւնը շատերի աչքումը ամօթխածութեան տեղն է բռնում:

Խղճահարութեան զօրութեան առտիճանները զանազան են լինում, նայելով թէ մենք բարոյականացնող օրինաց ծուծը եւ նպատակը սրբան ենք ըմբռնել եւ ինչպէս ենք մարտել. վերջապէս մեր հոգւոյ կազմակերպութիւնից է կախուած: Շատ անգամ խղճահարութեան զգացմունքը մեզ համար դառնումէ հոգւոյ մի տեսակ խայթոց: Ահա այդպիսի զգացողութեան տակը մարդս շատ անգամ դժուարութեամբ մօտենումէ նրան ումնից որ յոյս ունի գտնել հոգւոյ արեւծութեան հանդարտութիւնը:

Գ.) Չզման զգացողութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ խղճահարութեան զգացողութեան հետեւանքը՝ որի մտադրութիւնն է ուղղուիլ եւ այնուհետեւ չընկնել արած յանցանքը, ահա այդպիսով յանցաւորը հաշտութեամբ իւր խղճի հետ: Արքան որ մարդու մէջ խորը տպաւորուած են բարոյական պահանջողութիւնները, եւ որքան խիստ ենթարկւումէ մարդս խղճահարութեանը, այնքան աւելի եւս զզման ցանկութիւն է դարձնում նորա մէջ:

Ի դէպ է այստեղ նկատել, որ երեխայքը յաճախ խոստանում են իւրեանց դատարարակիչներին որ այլ եւս չեն կրկնի իրանց արած պակասութիւնները եւ յանցանքները, բայց իւրեանց թեթեւամտութեամբ կամ մոռացկոթեամբ շատ անգամ չեն կատարում իրանց խոստումները, ուստի դատարարակիչը չպիտի հիմնի սանկիւնների միայն զզման եւ խոստմանը վերայ, այլ իսկապէս պիտի ենթարկել նոցա այնպիսի պայմաններին, որ հեշտութեամբ կարողանան ի կատար ածել: Այլս կողմից դատարարակիչը պիտի աշխատէ արմատացնել նոցա մէջ այդ գործողութեանց հակառակ եւ լաւ կողմերը:

(Թարգմ.)

Առ. Յ. Ալեքսանյ.

Քաղաքիս.

ՅԵՏԱԳԻՄՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ:

Քանի մի դարերի ընթացքում Եւրոպան ատրիճանաբար հաւաքում էր իւր մտաւորական զարգացման նիւթերը եւ միշտ մեծ ձգտողութեամբ դիմում էր դէպի մտաւորական կեանքը: Երբ նա յետ նայելով միտք է բերում, թէ ինչպէս կիսավայրենի բարբարոսները Հռովմը հիմնայատակ արին, արուեստների ճրագը անցրին մարդկանց դարաւոր ճիգնթափութիւնով կազմուած բոլոր քաղաքակրթութեան պտուղները ոչնչացրին, նա քաղցր յուսով կրկնում է, թէ անցեալը էլ չի կարող վերագառնալ ոյժը, որ տուել է մեզ մեր մտաւորական կեանքի կարող աճելութիւնը՝ չափազանց մեծ է, որին չեն կարող կործանել որ եւ իցէ բարբարոսներ: Իսկ դուք ինչպէս էք կարծում, ընթերցող, այսպէս չէ՞ր արդեօք մտածում եւ զգում Հռովմայեցին, երբ նորա մտաւորական տեսութեան առաջ սփռած էին ծաղկեալ